

## 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

### 1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

#### 1.1. 1. 2002թ. հունվար-փետրվարի ՀՆԱ ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը, ընթացիկ գներով, 2002թ. հունվար-փետրվարին կազմել է 100429.9 մլն.դրամ: 2001թ. հունվար-փետրվարի համեմատ ՀՆԱ աճի տեմպը կազմել է 105.5%, հունվարին՝ համապատասխանաբար 107.5% աճի դիմաց:

Հանրապետությունում ՀՆԱ աճը հիմնականում ապահովվել է բազային ճյուղերում ավելացված արժեքի աճով 106.8%, այդ թվում արդյունաբերության՝ 107.6%, շինարարության՝ 108.3%, գյուղատնտեսության՝ 104.5%, տրանսպորտի ու կապի՝ 102.1% և առևտրի ու հանրային սննդի 108.6% :

ՀՆԱ աճը, հիմնական գներով (առանց զուտ հարկերի), կազմել է 106.1%, ընդ որում, հունվարին ՀՆԱ (հիմնական գներով) աճի տեմպը նույնպես կազմել է 106.1%:

Սակայն ընդհանուր առմամբ, շուկայական գներով, ՀՆԱ աճը 2002թ. հունվար-փետրվարին հունվարի համեմատ դանդաղել է 2 տոկոսային կետով, ինչը պայմանավորված է միայն անուղղակի հարկերի (սուբսիդիաները հանած) աճի դանդաղումով:

Այսպես, ընթացիկ գներով, այդ հարկերի աճը 2002թ. հունվար-փետրվարին 2001թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ կազմել է 102.9%, հունվարի 116.6% աճի դիմաց (փետրվարին աճի տեմպը կազմել է 93.4%): Ապրանքների և ներմուծման զուտ հարկերի (սուբսիդիաները հանած) աճի տեմպը նախորդ ամսվա (հունվարի) մակարդակի վրա պահպանելու պայմանում, ՀՆԱ աճը, շուկայական գներով, 2002թ. հունվար-փետրվարին կկազմեր 107.6%: